ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2024 թվականի N 358-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 271-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՖԱՆՖՐՈՒԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և «ՖԱՆՖՐՈՒԹ» սահմանափակ պատաս-խանատվությամբ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ արտոնությունը կիրառելու մասին» N 271-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության» բառերից հետո լրացնել «և «ՖԱՍԹ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության» բառերով.

2) 1.1-ին կետում «ցանկի 3-րդ և 4-րդ կետերի» բառերը փոխարինել «ցանկի 3-րդ, 4-րդ, 16-րդ և 17-րդ կետերի» բառերով.

3) 1.1-ին կետը «2307 076» թվերից հետո լրացնել «, L00000008 և L00000006» բառերով.

4) 1.1-ին կետում «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը» բառերը փոխարինել «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը և «ՖԱՍԹ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանը» բառերով.

5) որոշման հավելվածը 15-րդ կետից հետո լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 16-18-րդ կետերով՝

«16.	8701211011	Tractor Volvo FH 4x2 500 hp	Նոր անվավոր նստատեղերով քարշակներ՝ կիսակցորդների համար, միայն սեղմումով բոցավառվող ներքին այրման մխոցային շարժիչով (դիզելով կամ կիսադիզելով)՝-4-րդ կամ ավելի բարձր էկոլոգիական դասի	հատ	2	ԵՄ, Չինաստան	ԵՄ, Վրաստան, Չինաստան	145 000 000	Լիզինգի պայմանագիր թիվ L00000008
17.	8716393002	Schmitz Cargobull Tri-axle deep freeze semi-trailer	Նոր կցորդներ և կիսակցորդներ սառցարանային ավտոմոբիլների՝ 76 մ^3-ից ոչ պակաս թափքի ներքին ծավալով	հատ	4	ԵՄ, Չինաստան	ԵՄ, Վրաստան, Չինաստան	160 000 000	Լիզինգի պայմանագիր թիվ L00000006
18.	8716393002	Schmitz Cargobull Tri-axle deep freeze semi-trailer	Նոր կցորդներ և կիսակցորդներ սառցարանային ավտոմոբիլների՝ 76 մ^3-ից ոչ պակաս թափքի ներքին ծավալով	հատ	1	ԵՄ, Չինաստան	ԵՄ, Վրաստան, Չինաստան	40 000 000	».

6) որոշման հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «3 839 190 500» թիվը փոխարինել «4 184 190 500» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ